
ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱԾԻ ԱՌԵՎՏՐԱՏՆԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ (1923-1927 թթ.)

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Անդրկովկասյան Սեյմի անկումից և անդրկովկասյան երեք հանրապետությունների ձևավորումից հետո հայ-վրացական հարաբերությունների ուսումնասիրությունը միշտ էլ գտնվել է պատմաբանների ուշադրության կենտրոնում¹: Սա պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ՝ Վրաստանը Հայաստանի միակ քրիստոնյա հարևանն էր, և նրա միջոցով էր Հայաստանը կապվում արտաքին աշխարհի հետ: Մյուս կողմից՝ Երկրի տնտեսությունը զարգացնելու նպատակով Հայաստանի իշխանությունները ձգտում էին Բարումի միջոցով առևտուր իրականացնել այնտեղ իրենց ներկայացուցչություններն ունեցող երկրների և կազմակերպությունների հետ: Բացի այդ, Վրաստանում էին հավատարմագրված մի շարք պետությունների դեսպաններ, որոնց հետ Հայաստանի իշխանությունները բավականին ակտիվ շփումների մեջ էին: Հայաստանի խորհրդայնացումից հետո մինչև Վրաստանի խորհրդայնացումը² Երկու երկրների միջև հարաբերություններ գրեթե չկային, դեռ ավելին՝ Վրաստանի իշխանությունները ամեն կերպ խոչընդոտում էին Ուլսաստանից ՀՍԽՀ-ի համար նախատեսված առաջին անհրաժեշտության ապրանքների տրամադրումը իրենց տարածքով: Վրաստանի խորհրդայնացումից հետո քաղաքական և առևտրատնտեսական հարաբերությունները բավականին ակտիվացան: Հասկանալով Վրաստանի, հատկապես նրա սևովյան նավահանգիստների դերն ու նշանակությունը Երկիրը սոցիալ-տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու գործում՝ խորհրդային Հայաստանի իշխանությունները Թիֆլիսում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությանը կից հիմնեցին տնտեսական ներկայացուցչություն, իսկ Բարում և Սուխում նավահանգստային քաղաքներում՝ նաև ՀՍԽՀ պետական առևտուրի մարմնի՝ Հայպետառի ներկայացուցչություններ³:

¹ Հայ պատմաբաններից հայ-վրացական հարաբերություններին իրենց աշխատություններում անդրադարձել են նաև ավորապես Կորիծ Սարդարյանը՝ «Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ.», Եր., 2002, Սամսոն Քառյանը՝ «Հայաստանի միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1923 թթ.», Եր., 2005 և այլք:

² Վրաստանը խորհրդայնացել է 1921 թ. փետրվարի 25-ին:

³ Այդ մասին տես՝ Գ. Ա. Բալասանյան, Խորհրդային հանրապետությունների հետ ՀՍԽՀ առևտրատնտեսական առնչությունների պատմությունից (1921-1922 թթ.), «Հայոց պատմության հիմնահարցեր», Եր., 2009:

ԽՍԴՄ ստեղծումից հետո՝ (1922 թ. դեկտեմբեր), հայ-վրացական հարաբերությունների ուսումնասիրությունը պատմաբանների ուշադրությունից փոքր ինչ դուրս է մնացել:

Վրացական ԽՍԴ-ում Հայաստանի տնտեսական ներկայացուցչությունները շատ հաճախ իրենց արդյունավետությամբ զիջում էին Հայաստանունքներին: Դա էր պատճառը, որ ՀՍԽՀ իշխանությունները գերադասում էին լուծարել տնտեսական ներկայացուցչությունները և նրանց լիազորությունները հանձնել Հայաստին⁴: Վրաստանի բաժանմունքներից իր արդյունավետությամբ աչքի էր ընկնում հատկապես Բաթումի բաժանմունքը:

Բաթումում Խորհրդային Հայաստանի տնտեսական ներկայացուցչությունն իր գործունեությունն իրականացրել է մինչև 1923 թ. հուլիսի սկիզբը: Այնուհետև այն ՀՍԽՀ ժողկոմխորհի որոշմամբ լուծարվել է, և նրա գործառույթները հանձնվել են Հայաստին Բաթումի բաժանմունքին:

1923 թ. փետրվարի 20-ին Հայաստին կառավարիչ-տնօրեն Պողոսյանը լիազորագիր է տալիս Մուրադ Ղազարյանին առ այն, որ նա նշանակվում է Բաթումում Հայաստին ներկայացուցիչ: Լիազորագրով Ղազարյանին իրավունք էր տրվում Հայաստին անունից կնքել գործադրներ, համաձայնագրեր, պայմանագրեր, վարձակալել շարժական և անշարժ գույք, գործարքներ իրականացնել պետական, հասարակական, կոռպերատիվ հաստատությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ: Բացի այդ՝ նա իրավունք ուներ բանկից ստանալու գումար, ներկայացնելու Հայաստին վարչական և դատական հաստատություններում, ընդունելու և աշխատանքից ազատելու աշխատակիցների, ինչպես նաև իրականացնելու այլ գործառույթներ⁵:

Սակայն Ղազարյանի օրոք Բաթումի բաժանմունքը աչքի չէր ընկնում իր ակտիվությամբ, ինչն էլ հարուցում է Հայաստին վարչության ղժգոհությունը:

Ապրիլի 10-ին Հայաստին կառավարիչ-տնօրեն Պողոսյանը նամակ է ուղարկում Ղազարյանին, որտեղ իր բողոքն է արտահայտում այն մասին, որ վերջին ժամանակներում ներկայացուցչության գործունեությունից վարչությունը ոչ մի տեղեկություն չունի, չեն ստացվում նաև հաշվապահական տվյալներ: Բացի այդ՝ Ղազարյանը կանխիկ գումարով Հայկոնապի ներկայացուցչից գնել էր ծխախոտ: Պողոսյանի կարծիքով, քանի որ Հայկոնապի ներկայացուցչությունը լուծարվել էր, անհրաժեշտ էր շատ արագ այդ ծխախոտը ամրագրել Հայաստին հաշվին⁶:

Այս նամակից հետո, ամենայն հավանականությամբ, Ղազարյանը եզրակացություններ չի անում, ինչը վերջնականապես լցնում է Հայաստին վարչության համբերության բաժանը և վարչությունը որոշում է հար-

⁴ ՀՍԽՀ-ում պետական-կոռպերատիվ առևտուրը տնօրինում էր Հայպետառը, որը 1923 թ. փետրվարի 10-ին վերանվեց Հայաստին:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 554, գ. 1, գ. 43, թ. 88:

⁶ Տե՛ս նույն տեղը, թ. 126:

ցին տալ արմատական լուծում՝ աշխատանքից ազատել Ղազարյանին:

1923 թ. հունիսի 19-ին Պողոսյանը նամակ է ուղարկում Յայառի Սուխումի գրասենյակի ղեկավար Ազիզյանին և հայտնում, որ հունիսի 17-ից նա նշանակվում է Բաթումում Յայառի ներկայացուցիչ: Նրան հանձնարարվում է լուծարել Յայառի Սուխումի գրասենյակը, վաճառել գույքը, վճարել աշխատողների կուտակված աշխատավարձերը: Բացի այդ՝ հանձնարարվում է ընդունել Բաթումի ներկայացուցչությունը⁷:

Յոկտեմբերի 12-ին Ազիզյանը գեկուցագիր է ուղարկում Յայառի վարչություն, որտեղ ներկայացնում է ՀՍԽՀ տնտեսական ներկայացուցչության լուծարումից հետո հետագա ամիսներին բաժանմունքի իրականացրած գործունեությունը: Ըստ նրա՝ հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 18-ը գրասենյակը, ի դեմս կառավարչի և պահեստապետի, զբաղված է եղել լուծարված ՀՍԽՀ տնտեսական ներկայացուցչությունից գործերի, ապրանքների և գույքի ընդունմամբ: Միաժամանակ իրականացվել են կերի ձեռք բերման և Կ.Պոլսից ՀՍԽՀ ժողկոմիսորիի և Կարմիր խաչի անունով ստացված ապրանքների ընդունման և Յայատան առաքման աշխատանքներ: Օգոստոսի 18-ին Ազիզյանը հիվանդության պատճառով մեկնել է Բաթումից և բաժանմունքի գործերը ժամանակավորապես սկսել է վարել բաժանմունքի գործակալ Տեր-Օգանեզովը: Նրա օրոք իրացվել է 5 վագոն անասնակեր և 113 դույլ գինի: Իր գործունեության լուսաբանումից բացի, Ազիզյանը անդրադառնում է նաև Յայատանից Բաթում ուղարկված այն ապրանքներին, մասնավորապես կոնյակին ու գորգերին, որոնց իրացնան հետ կապված բաժանմունքը խնդիրներ ունի: Ըստ նրա՝ չնայած կոնյակի գները մի փոքր ընկել են, այնուամենայնիվ շատ վատ է վաճառվում՝ օրական հազիվ 2-10 շիշ: Այս պայմաններում, Ազիզյանի խոսքերով, հնարավոր չէ կարճ ժամանակամիջոցում իրացնել իրենց մոտ եղած կոնյակի ողջ խմբաքանակը՝ ավելի քան 18.000 շիշ: Մոտավորապես նույն պայմաններում է գտնվում նաև գորգերի վաճառքը: Տնտեսական ներկայացուցչությունից բաժանմունքն ընդունել է 31 հատ գորգ, որոնցից յուրաքանչյուրի արժեքը է 6400 ռուբլի, ինչը, ըստ Ազիզյանի, շատ բարձր է: Իր գեկույցի վերջում Ազիզյանը խոսում է Բաթումի շուկայի և զարգացման հեռանկարների մասին: Ըստ նրա՝ մեկ տարի առաջ Բաթումը միակ կետն էր, որի միջոցով կապվում և զարգանում էր Եվրոպա-Ասիա առևտորային հանգույցը: Աշխարհի տարբեր առևտորային կենտրոններից այստեղ էին հավաքվում բազմազան ապրանքներ: Այժմ, ըստ նրա, Բաթումը կորցրել է իր նշանակությունը միջազգային առևտորի համար: Դա ուներ երկու պատճառ: Մաքսային վճարը Բաթումի մաքսակետում բավականին բարձր էր, և Բաթումը վերահսկվում էր պետական մար-

⁷ Տե՛ս նույն տեղը, թ. 171:

մինների կողմից ու արտասահմանյան ապրանքների մուտքը սահմանափակված էր⁸:

Հայարի Բաթումի բաժանմունքը բավականին ակտիվ գործունեություն էր ծավալել հանրապետության ներպետական մարմիններն ու արդյունաբերական ձեռնարկություններն անհրաժեշտ ապրանքներով ապահովելու համար: Հաճախ այս կամ այն գերատեսչության անփույթ աշխատանքի, փաստաթղթերի ոչ ճիշտ լրացման և այլ պատճառներով ՀՍԽՀ ժողկոմատների կողմից Հայարին ներկայացված առանձին արդարների ստացման հայտերը հասցեատիրոջը չեն հասնում կամ հասնում էին ուշացումով:

Այսպես, 1926 թ. սեպտեմբերի 23-ին Հայարի Բաթումի բաժանմունքը հեռագիր է ուղարկում ՀՍԽՀ ժողկոմխորհին, որտեղ նշում էր, որ առանց համապատասխան փաստաթղթերի Բաթումի ՀՍԽՀ հյուպատոսարանի հասցեով «Աբացիա» շոգենավով ուղարկվել է 220 կգ յուղ⁹: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 24-ին, ժողկոմխորհի գործերի վարչության Հայկոռաջի գործերի վարիչ Յովհաննիսյանը պատասխան հեռագիր է ուղարկում, որտեղ նշում էր, որ այդ յուղը իրենց չի պատկանում¹⁰: Սույն խնդրով ժողկոմխորհի գործերի կառավարիչ Վ. Մալխասյանը հեռախոսագիր է ուղարկում ՀՍԽՀ Յողժողկոմատին, Հայարին, Հայկոռաջին, Հայգյուղկոռաջին, Առժողկոմատին՝ խնդրելով, որ եթե այդ յուղը պատկանում է նրանցից որևէ մեկին, շտապ հայտնել ժողկոմխորհին¹¹: Ստացված պատասխաններից պարզվում է, որ նշված սննդամբերը պատկանում էր Յողժողկոմատին: Սեպտեմբերի 25-ին Յողժողկոմի տեղակալ Դաշտոյանը հեռագրում է Վ. Մալխասյանին և հայտնում, որ «Աբացիա» շոգենավով ստացված «ծեյթաղի յուղ» պատկանում է իրենց, և իրենք արդեն իրահանգել են Հայարի Բաթումի բաժանմունքին բեռը ուղարկել Հայաստան¹²: Սեպտեմբերի 27-ին այդ մասին Վ. Մալխասյանը հեռագրում է Բաթում¹³:

Բաթումի բաժանմունքը ստանում էր նաև ՀՍԽՀ արդյունաբերական տարբեր ձեռնարկությունների և հաստատությունների հասցեով արտասահմանից առաքված բեռները և ուղարկում իրենց հասցեատերին: Այսպես, 1927 թ. մարտի 25-ին Բաթումից Հայարի ներկայացուցչի՝ ՀՍԽՀ ժողկոմխորհի գործերի կառավարչին ուղարկած գրության մեջ ասվում է, որ սպասվում է Հայաստանի Լենինի անվան մեքենաշինական գործարանի համար Աներիկայից «Դանսբորգ» շոգենավով ուղարկված 16 մեքենա: Ըստ այդմ՝ գրության հեղինակը խնդրում է ուղարկել համապատասխան լիազորագիր դրանք ստանալու և Հայաստան առաքելու համար: Միաժամանակ հայտնվում է, որ «Կուրսկ»

⁸ Տե՛ս նույն տեղը, գ. 30, թ. 1-4:

⁹ Տե՛ս նույն տեղը, ֆ. 113, գ. 2, գ. 233, թ. 1:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, թ. 2:

¹¹ Տե՛ս նույն տեղը, թ. 3:

¹² Տե՛ս նույն տեղը, թ. 9:

¹³ Տե՛ս նույն տեղը, թ. 10:

շոգենավով ՀՍԽՀ պետական համալսարանի համար ստացվելու է 1 արկդ՝ 3 գլոբուսներով, որոնք տեղ հասնելուն պես կուղարկվեն հասցեատիրոջը¹⁴:

Ապրիլի 2-ին նույն բաժանմունքից ՀՍԽՀ ժողկոմխորից կրկին գրություն է ստանում առ այն, որ Ալավերդու գործարանների համար ստացվել է նավթային շարժիչ: Գրության մեջ նշվում էր նաև, որ բեռը ստացողը, ըստ պաշտոնական լիազորագրի, Մոսկվայի «Մետալլիմ-պորտ» կազմակերպությունն է, ուստի մաքսատունը արգելում է առանց Անդրկովկասյան մաքսային վարչության համապատասխան թույլտվության մաքսատնից բեռի դուրսբերումը: Ըստ այդմ՝ հեղինակը հավելում է. «Խնդրում ենք համապատասխան մարմինների միջոցով հանձնարարել բեռը անարգել մեզ հանձնելու համար, որպեսզի այն ուղարկվի Ալավերդի»¹⁵:

Ի կատարումն այդ խնդրանքի՝ ապրիլի 6-ին Մալխասյանը գրություն է ուղարկում Անդրկովկասյան մաքսային վարչություն, որտեղ հայտնում է Անդրկովկասյան պղնձի գործակալության (Զակմեդ) հասցեով Ալավերդու գործարանների համար ստացված նավթային շարժիչի մասին, որը Բարումի մաքսատունը հրաժարվում է առանց Անդրկովկասյան մաքսային վարչության համապատասխան թույլտվության բաց թողնել, ուստի խնդրում է հանձնարարել Բարումի մաքսատանը՝ թույլատրել բեռի ստացումը: Անհրաժեշտության դեպքում խնդրվում է մանրամասները ճշտել «Մետալլիմպորտի» հետ¹⁶: Նույն օրը Մալխասյանն իր գրության մասին տեղյակ է պահում Յայառի Բարումի բաժանմունքին, իսկ մայիսի 19-ին Անդրկովկասյան մաքսային վարչության կողմից գրություն է ուղարկվում ՀՍԽՀ ժողկոմխորիին առ այն, որ ապրիլի 28-ին բեռը Բարումի մաքսատան կողմից բաց է թողնվել¹⁷:

1927 թ. հունիսի 29-ին Յայառի նույն բաժանմունքից հեռագիր է ուղարկվում ՀՍԽՀ ժողկոմխորիին, որտեղ նշվում է, որ երկրաշարժից տուժած Լենինականի համար Ֆրանսիայից ստացվել են 40 հողաքանդ մեքենա: Յեռագրում խնդրվում է շտապ հայտնել, թե որ հասցեով պետք է ուղարկվեն նշված մեքենաները¹⁸: Այդ մասին հուլիսի 2-ին ժողկոմխորից գրություն է ուղարկվում Լենինական՝ Երկրաշարժի վերականգնման հանձնաժողովին: Գրության մեջ նշվում է, որ ժողկոմխորիի նախագահ Յամբարձումյանի կողմից Յայառին կարգադրություն է իջեցվել այդ մեքենաները ուղարկել հանձնաժողովի հասցեով¹⁹:

Անփոփելով, կցանկանայինք նշել, որ մտնելով ԽՍՀՄ կազմի մեջ՝ Խորհրդային Յայաստանի իշխանությունների և մասնավորապես Թիֆ-

¹⁴ Տե՛ս նույն տեղը, գ. 580, թ. 1:

¹⁵ Նույն տեղում, գ. 1072, թ. 1:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, գ. 1072, թ. 2:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, թ. 6:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, գ. 653, թ. 3:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, թ. 1:

լիսում ՀՍԽՀ տնտեսական ներկայացուցչության գործունեության մեջ որոշակի պասիվություն է նկատվում, և դրանով էր պայմանավորված նաև Սուխումում Հայաստանի տնտեսական ներկայացուցչության փակումը: Սակայն ընդհանուր առմամբ Հայաստանի գործունեությունը Վրաստանում և մասնավորապես Բաթումում արդյունավետ է եղել և մեծապես նպաստել Խորհրդային Հայաստանի տնտեսության զարգացմանը: Պետք է նշել, որ Հայաստանը, բացի առևտրական հարցերից, նաև բեռնափոխադրումներ էր իրականացնում: Վերջինս ՀՍԽՀ տարբեր ձեռնարկությունների և գերատեսչությունների պատվերով, նրանց կողմից տրված լիազորագրերի հիման վրա Բաթումում ստանում էր նրանց համար արտասահմանում գնված ապրանքները և կազմակերպում դրանց տեղափոխությունը Հայաստան:

ГРИГОР БАЛАСАНЯН – Из истории торгово-экономической деятельности Арменторга в Грузии (1923–1927). – Учитывая географическое положение Грузии и роль её черноморских портов для экономического развития Армении, наши власти всегда стремились установить тесные торгово-хозяйственные отношения с соседней страной.

Победа советских порядков не внесла существенных изменений в эту политику. После образования СССР (декабрь 1922 г.) в Грузии, преимущественно в Батуми, активную торговую-экономическую деятельность развернула государственная компания Арменторг. Помимо того, организация занималась также грузоперевозками. По заказу различных армянских заводов и других государственных учреждений Арменторг принимал в Батуми купленные за границей и предназначенные им товары и осуществлял их доставку в Армению.

GRIGOR BALASANYAN – From the History of Trade Economic Activity of ArmTrade in Georgia (1923-1927). – The Armenian authorities always tried to establish close trade-economic relations with Georgia, taking into consideration its geographical position and means of Black Sea ports in the development of the economy of Armenia.

The establishment of soviet regime didn't make changes in the Armenian policy and beginning from 1923, especially the State Trading Organization of SSRA – the Armentrade, carried out an active economic activity in Georgia, particularly in Batumi. The latter also carried out freight activities – it received goods which were bought abroad for industrial enterprises and other state organizations of SSRA and were sent to Batumi as well as organized the delivery of goods to Armenia.